— Միեւնոյն է, — ասացի ես: — Եթէ նա ուրիշ գազանների թիւը փոքրացնում է, բայց նրանց կերածը ինքն է ուտում:

Նա ինձ պատասխանեց.

— Լաւ է՝ հարիւր մանր գազանների տեղ մի մեծ գազան կերակրել:

— Եւ նրա փշրանքներից եւս ուտել...

Երեցփոխանը ուղիղ նայեց աչքերիս մէջ: Չգիտեմ, զարմանում էր նա, թէ բարկանում, ինչպէ՛ս համարձակոեցայ մի այդպիսի նկատողութիւն անել: Համոզուած լինելով, որ դրանք ուժի առջեւ խոնարհողմարդիկ են, մտածեցի ինձ եւս ցոյց տալ, ասելով.

— Այս գիշեր կը տեսնեմ թէ՛ ձեր փաշային եւ թէ՛ ձեր առաջնորդին:

— Ներեցէք համարձակութեանս, դուք ո՞վ էք, — հարցրեց թաղական խորհրդի անդամը, իսկ երեցփոխանը շոարած մնաց:

— Ես ձեր քաղաքում գտնուող եւրոպացի բժշկի թարգմանն եմ: Այս գիշեր թէ՛ ես եւ թէ՛ իմ պարոնը հրաւիրուած ենք առաջնորդի մօտ ընթրիքի: Փաշան էլ այնտեղ կը լինի:

Նրանք սկսեցին մի առանձին յարգանքով վերաբերուել դէպի ինձ: Մեր վիճաբանութիւնը ընդհատուեցաւ, որովհետեւ մեր մօտով անցաւ Սիմոն պատուելին, իր երգեցիկ խմբի հետ: Նա միւս աշակերտներին արձակել էր, իր հետ միայն վերցրել էր երգիչներին: Դաշտային կրկնութիւններ էր անում: Այն գիշեր իր երգիչների հետ պատուելին հրաւիրուած էր առաջնորդի մօտ, այդ պէտք էր հասկացնել ամբողջ քաղաքին: Իսկ այստեղ կար քաղաքից բաւական մեծ բազմութիւն:

Մեր մօտով անցնելու միջոցին նա գլուխը խորհրդաւոր կերպով շարժեց եւ դիմելով երեցփոխանին՝ ասաց.

— «Այնտեղի» համար եմ պատրաստում...

— Շատ ապրես, Սիմոն պատուելի, — պատասխանեց երեցփոխանը: — Ձայնդ անսպառ լինի:

Պատուելին նշան տուեց, աշակերտները եղանակեցին.

Կահ-կա՜հ կը կանչէ կաքաւն վրը քարին,

Վարդ-վա՜ղ կը կանչէ բուլբուլն վրը թփին.

Կաքաւի ձայնէն՝ եկաւ վարուժանն,

Բուլբուլի ձայնէն՝ եկաւ սիրականն:

Սիրէ՛, կաքաւիկ, քո սիրուն քարիկ,